# ՊԱՏԿԵՐՈԽՍՈՑՑ ԳԻՐՔ

(Տես յէջ 289)

ՅԵՏ առաջին չորս թղթոց զարդաձեւերուն՝ իններորդ երեսն ներկայացընէ երեք պատկերք․ներքեւը՝ Դաւիթ, բիւզանդակերպ իմն հագուած, բարձով աթոռակի վրայ նստած, երկայն կոթով քնար ի ձեռին․ որոյ քով պարզ չորս գծով նեղ երկայն քառակուսի ձեւ մի կայ, որ թուի սաղմոսացպրակն։ Դաւթի գլխուն վերեւը կանգնած է մէկ մի՝ որոյ լուսապսակ գլխոյն քով գրուած է, հնկեկ գրով, Մովսէս մրգէն․ բայց բաց ի իւր ձեռքի սրածայր և վերի կողմը խոտորնակ կամ խաչաթեւի մասով գաւազանէն՝ ամենեւին ի գիրս ծանուցեալ Մովսեսի կերպարանք չունի, այլ Հռովմայ գեռնադամբանաց կամ հին նկարուց տեսնուած երիտասարդ անմօրուս կուլակաւոր և լուսապսակ սուրբ մի, անթեզան լայն լօղիկով, զոր ձախ բազկին վրայ ժողված է․ լօղկին տակի պատմուճանին փեշերուն վրայ և վերն այլ գրուած է՝ ԼՁ, այսինքն լազուարտի գունով ներկելու է։ — Ասոր քովը կեցած է նոյնպէս լուսապսակով կարճ մօրուօք մէկ մի, գրեթէ նոյնպէս հագուած, ձախ թեւին տակ գիրք մի, զոր՝ ոչ հեղինակն, այլ ուրիշ ոմն՝ կարմրացուցեր է, նոյնպէս և աջ ձեռքը՝ զոր կարկառէ այն անձին, որոյ գլխոյ քով նոր և տձեւ գրուած է Եղիայ մրգ։ — Այս պատկերաց մազաղաթ թղթին միւս (10դ) երեսն ներկայացընէ վեց պատկերք․ երկուքն յայտնապէս մեր տօնած թագաւորքն են (Թէոդոս և Կոստանդիանոս), երկուքն այլ բարձի վրայ ծունկ դրած, մէկն՝ երկայն ձողով խաչ ի ձեռին, միւս ձեռքն այլ ի փէշ զօտւոյն, եթէ ուրիշ բան չէ բռնածն․ միւսն՝ բազուկները ցածկեկ տարածած է, և մէկ մասով կու ցուցընէ, թերեւս իր դիմաց հազած երկու կիսանձն մարգարէ կամ աւետարանիչ, զի ձեռքերում գալարեալ պրակ կայ․ ասոնց նման է հինգերորդն, զարմացմամբ նայող ի ձախ կողմն, ուր նկարագծած է խաչակալ թագաւորն։ Միւս՝ վեցերորդն, կիսանձն, թուի հայրապետ կամ քահանայ մի մօրուանի, շուրջառով և փորուրարով ձեռուընները հրաժարական ձեւով վերուցած։

11դ երեսն՝ առաջին ութ երեսաց նման եզերական զարդաձեւեր է․ նոյն երեսն (12) այլ և այլ տեսակ զարդ ու պատկեր․ որոց մէկն է յիշեալ Ս․ Հոգւով և սկիհով զարդն, միւսն մեր օրինակած թիւ 10 միագլուխ եռաձկունքն․ նոյնպէս և այս 12 թիւն, որոյ ինչ ըլլալը յայտնէ և վրայի գրուածն՝



Թիւ 12·

իգնատիոս, «գազանաց մանրեալ ժանեօք» ըստ չարականի, յորմէ՝ կամ ի ճաշոցի եզերքէն առնուած է պատկերն։ Այս մեր 10 և 12 թուոց քով կանգնած է՝ թէ և անգիր՝ բայց ձեւէն ծանօթ՝ Ս․ Հռիփսիմէ, թագ ի գլուխ, խաչ ի ձեռին, միւս ձեռքն այլ հարկառած, մէջքին վրայ գրուած է ԿՐ, այսինքն կարմիր գունաւորելի է։ Սոյն երեսին վրայ կայ և գեղեցիկ թռչնազարդ մի, նոյնպէս և գեղեցիկ Ց թռչնախառն գիր մի։ Դարձեալ, բաց ուրիշ մանր զարդերէ, մեծկակ Ե մի մարդագլուխ, ի ձեռքն այլ զարդ մի, որով Ե գրոյն թեւն կ'երկըննայ, գլխուն վրայէն այլ կ'երկարի զարդաձեւն թիւ 13։

13դ երես․ քանի մի մանր զարդեր, և մեր թիւ 8 բոլորակն, հինգ այլ պատկերք թիւ 14․ երկուքն մեծկակ և կանգուն կեցած, յունաձեւ քահանայական զգեստուք․ մին յանուանէ նշանակուած Բսկիբերան Յոհան, առջողն օրհնելով, ի ձախում գիրք․ միւսն Սուրբ



Ֆիգ. 13.



Ֆիգ. 14.

digitised by A.R.A.R.@

Բարսեղ, Նոյնպէս աջով օրհնելով և ի ձախում հաստատուն սրածայր գաւազան կամ ցուպ։ Նոյն կանգուն դիրքով՝ բայց աւելի փոքր՝ ուրիշ Հայրապետ մի Թուի. անոր քով կիսանձն առաքեալ կամ մարգարէ մի, աջը վերուցած, ի ձախումն երկայն գալարեալ պրակ։ Ասոնց ներքեւ նոյնպիսի անձ մի ծնրադիր, փոքրիկ գալարուն պրակ մի ի ձախում, աջը պարզած. դէպ ի սուր գլուխն՝ օրհնող ձեռք մի կայ եռանկիւնի ձեւէ կամ թեզանէ դուրս ելած։— Թղթին միւս իջում՝ այլեւայլ ոճով պատկերք կան. երկուքն վերոյգրեալ Հայրապետաց նման. մէկ մի աւելի մեծկակ բազմախաչեան նափորտով, գիրք ի ձեռին, վրան գրուած Սուրբ Ներսէս, Թ. 15 քովը կլոր և անմօրուս դէմքով՝ (զոր յետոյ մէկն Թուխ կարմիր ներկեր է), քահանայազգեստ սուրբ մի. սոր քովն այլ ուրիշ անմօրուս մի, բուրվառ յաջում, տապանակ կամ տուփ մի ի ձախում. Թէ և տգէտ մի յետոյ գրեր է Տէր Ոստակէս, յայտնի է Ս. Ստեփանոս ըլլալն, հագած զգեստուց վրայ տեղ տեղ գրուած է ՃՆ(արակ), պատմուճանին վրայ Լզ։ Ասոր քով յետոյ գծագրած կ'երեւի Յով. Մկրտիչ, եղջերաձեւ մազերով, վրան մաշկեակ մի առած։ Այս ամենուն վերեւ կան երեք կիսանձինք. մէկն կնգղաւոր Անտոնն է գրուած. միւսն Թէոդոս, զգեստուց վրայ գրուած Կչ (կանաչ), տեղ մ'այլ՝ աղ. միւսն՝ Գաւրիք է, տոմս ի ձեռին. երկու Թագաւորաց դիմաց այլ մէկ մէկ օրհնող աջ գծած է։ Դատարկ տեղ մ'այլ երկու գլուխ կարմրագծած է, մէկն շատ նուրբ և կենդանի նայուածքով։ Յայտ է որ այս պատկերքս ի ճաշոցաց և շարականաց օրինակուած են։



Թիւ 15.

15դ երես. Ե գիր մի, և այլ եւ այլ զարդեր, յորոց մէկն ծորակով և անզարդ, միւսն անծորակ այլ զարդարուն կուժ. յանկեան մի՝ բազմամանուած բոլորակ մի։ Ամենէն նըշանաւոր և երեսին կէսը գրաւող ընդ երկայնութիւնն, մեծ լուսապսակով անձ մի՝ թերեւս կոյս մի, երկայն պատմուճանով, բայց ազդու կերպարանքով, նայուածքն դէպ ի վեր և ձեռքերն կէս վախով հիացում յայտնեն։ Ասոր գլխուն և յիշեալ բոլորակին միջոց գրուած են այն չորս դեղոց (գունոց) անուանքն՝ զոր ի սկզբան նշանակեցինք։ Այս անձին ոտից ներքեւ մռուզաւոր այլազգւոյ գլուխ մի կայ, ազդու նայուածքով, որ յետոյ գծագրած Թուի։

16. 17. 18 երեսքն՝ մարդոյ, Թռչնոց, ձկանց խառնուածով տառք են, յորոց մին է և մեր ցուցած Փ գիրն (Թ. 7)։ 17դ երեսում գրուած է առանց յարմարութեան անծանօթ հրեշտակաց անուններ. «Տածրէլ և Սաղմիէլ » հրեշտակն, որ ի վերայ դատաստանաց ունին » իշխանութիւն »։— 19 և 21 երեսքն՝ երկայն և կարճ զարդաձեւք են։ 20դն մեր 11 Թիւն է, անոր նման երկու այլ Թռչնուհիք. դարձեալ, եռաբբուկ սիրամարգ մի որ կամ յետոյ գծուած է, կամ հին գծագրածը սեւացուցեր են. նոյնպէս ըրած կ'երեւի ձառագէմ գլուխ մի եւս։— 22դ երեսն է՝ հաւանօրէն՝ Մատթէոսի աւետարանի ճակատ մի, եռանկիւն ձեւի մէջ կարապի երկայն վզով կենդանի մի. ճակատին ներքեւ երկու գլուխ գծագրած են քառակուսի պատուանդանաց վրայ. երկուքին միջոցը գրուած է Մարկոս։

23 երեսն է Պատկերագրոցս ամենէն նըշանաւորն. այն նախայիշեալ բազմակերպեան բաղադրեալ հրէշն Թիւ 16։ Այս պատկերս մեծութեամբն այլ նշանաւոր է որ մէկ երեսի մէջ չէ բովանդակուած, այլ հրէշին Թռչնամասն ոտքերն անցեր են 24դին վրայ, որոյ մեծ մասն պարապ Թողուած է։— Այդ 24դ երեսն Ս. Մարկոսի աւետարանի մի ճակատ է. զարդին մէկ կողմն միայն նկարուած, և ի միջին մասին՝ որ է կիսաբոլոր, մէջ տեղը գլխակոր գազան մի, շրջանակին մէջ այլ նման գազաններ իրարու ետեւէ վազըռտող։ Այս էջն սխալով մի երկու բաժնուած է, մէկ կողմը Ս. Մարկոս նստած, սովորական կերպով ձեռքը բերնին դրած, ի զարմացման կամ մտածման. դիմացը իր գրոց առաջին գիրն Ս, երկու այլանդակ կենդանեօք ձեւացեալ, երկուքն այլ Թաթերովն քառակուսի բան մի բռնեն. վերեւն գրուած է Մարկոս։

25դ երես. կէս ճակատ մի յորում և բոլորակ մի ճարտար ագուցիկ մանուածքով. դիմացն անձ մի կայ, մէկ ձեռքով կ'օրհնէ, միւսով տակառաձեւ բան մի բռնած է, անշուշտ գրուածքը. լուսապսակին վրայ գրուած է Նաւռում։ Այս երեսին վարի կողմէն նըկարագծած է ծառի մի վրայ հեծած և բըռնած տղայ մի, Քրիստոսի իշով յԵրուսաղէմ մտած առեն եղածը նշանելով։

digitised by A.R.A.R.@

26դ երեսին նկարքն են բոլորակն Թ. Գ. նոյն տեսակ աւելի պզտիկ բոլորակ մի չորս իրարախառն թռչնովք. պատկեր մ'այլ կայ անուամբն նշանակուած Ամբակում, յայտ է թէ մարգարէն։

27դ երեսն ներկայացընէ պարզ գծով չատ մանկաղէմ հեծեալ մի, որ աւելի Ս. Թէոդորոս թուի քան Ս. Գէորգ, երկայն խաչագլուխ նիզակին ծայրը ներքեւը գծուած աւէձեւ գալարեալ վիշապին բերնին մէջ մխած։ Այս երեսին մեկ անկեան վրայ փոքրիկ սեւանկար հեծեալ մի կայ զրահազգեստ, արշաւելու դիրքով, և թուի Ս. Վարդան։ Այսր ներքեւ ամենափոքրիկ գունաւոր բաւական ճարտար նկար մի կայ, որ թուի Ս. Աստուածածնի և Ս. Յովսեփայ հեծած՝ զՅիսուս տանելն յԵգիպտոս։ Վարի անկիւնում այլ կայ թագաւոր մի հեծեալ, բայց սա թերեւս յետոյ գըծագրած է։ Դիմացի՝ մասամբ կտրած՝ անկիւնն այլ ցուցընէ հին գծագրութեամբ՝ մի կամ երկու փուլեգագատակ գլուխ։

Թղթին միւս երեսն (28դ) տասն կամ



Թիւ 16.

11 կիսանձն պատկերք ունի. մաշած անկեան վրայ երկու քովէ քով գլուխք կ'երեւան, բայց մէկ մարմին, անշուշտ Պետրոս և Պօղոս. ասոնց քով Ս. Աստուածածին թեւարաց՝ աղօթելու կամ ի գիրկն ընդունելու ձեւով. անոր քով Յիսուսի երկու խաչալուսապսակ դէմք. մէկն օրհնելու ձեւով, միւսն՝ ձեռքն ի վերայ կրծոց։ Ասոնցմէ վար կայ Եղիսէ մարգարէն. քովը մորթեալ ոչխար գրուած, Յիսուս ոչխարն ի յուս։ Աւելի վար Ս. Գրիգոր ձեռնամբարձ աղօթող. — Նոյնպէս Յոր, մէկ ձեռքն ի վեր, միւսին երկու մասն ամփոփած. — Պետրոս, երկու ձեռքերն հաւասար կարկառած. — Սուրբ Յովանէս՝ ճղճղած մօրուօք և մազերով։

29դ եր. թեթեւ կանաչ և կապոյտ գունով վեց հայրապետք նկարուած են քահանայական զգեստուք, ոմանք բազմախաչեան նափորտով, մէկուն վրայ միայն նշմարուի Գրիգոր անունն. ամենքն այլ լայն դեղնագոյն լուսապսակ ունին՝ և անոնց միջոց պարապ տեղերում՝ չորս նման անպսակ գլուխներ նկարած են, ամենքն այլ մօրուանի, ամենքն այլ բաւական ճարտար գծագրութեամբ, բայց աւելի կամ պակաս՝ մաշած և գունաթափ։

30դ երեսն պարապ թողուած, յետոյ ան-

digitised by A.R.A.R.@

արուեստ ձեռք մի՝ կնգզուոր մի գծագրեր է։ — 31դին վերեւը գրուած է օրհնէնքն հարսինն ու փեսին (տ. Բազմ. 290)․ ներքեւը կան քանի մի իրարագուցիկ գծերով զարդք՝ որպիսիք մեր ամենէն հին Ձեռագրաց մէջ գտուին։ — 32դ երեսն գրեթէ համանման է 28դին քան զայն աւելի քարակ նկարուած ութ պատկերք, և են զոյգ Սուրբ Պետրոս և Պօղոս, Սուրբ Աստուածածին, խաչալուսապսակ Յիսուս՝, Եղիսէ մրգրէ, Մոլորեալ Ոչխարն, Սուրբ Յովհաննէս Մկրտիչ և Յիսուս մի եւս։



Թիւ 17.

33դ երեսին վերի կիսուն Մատթէոս և Մարկոս Աւետարանիչք, իւրաքանչիւր աթոռոյ վրայ բազմած՝ գրելու ձեւով. վերեւնին գրուած է՝ շազվարդ, Մարկոսի զգեստուց վրայ այլ ուրիշ գունոց անուանց նշանք։ Երեսին վարը հակառակ կողմէ գրուած է գունոց բաղադրութեան նուսխայն՝ զոր նախ օրինակեցինք (տ. Բազմ. 290)։

34դ երեսն ահաւասիկ այս եօթն Նահապետաց պատկերքն է՝ Թիւ 17, յորոց կրնան զուշակուիլ ուրիշ պատկերներն եւս, թէ և չատն՝ քան զատոնք աւելի պարզ և քիչ գծերով ձեւացած են։ Նահապետաց առաջնորդ կարգուած է՝ ամենուն նախահայրն Ադամ, միւսոց նման զգեստաւորեալ, զգեստուն գոյնն այլ գրուած է բաց ծիրանի, միւսոց վրայ՝ շազվարդ. ամենքն այլ ողջաչաւորի կերպարանօք թափօրապէս քայլուածք ձեւացընեն. միթէ ընդ առաջ Քրիստոսի ելնեն, մինչ սա իջաւ հոգւովն «աւետարանել հոգւոցն որք էին ի բանտին». կամ թէ մարդկութեան դարուց անդադար ընթացքը ներկայացընեն՞

Տարայարեկի